

ԹԵՄԱ 9

Դասընթացի անվանումը՝	«ՀՀ դատական պրակտիկան պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման ինստիտուտի վերաբերյալ»
Տևողությունը՝	16 ակադեմիական ժամ
Ժամանակահատվածը՝	2012 թ.
Անցկացման վայրը՝	ՀՀ վճռաբեկ դատարանի կոնֆերանսների դահլիճ
Մասնակիցների առավելագույն քանակը՝	25

Դասընթացը նախատեսված է ընդհանուր իրավասության դատարանների, վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորների, ինչպես նաև դատավորների թեկնածուների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար:

Դասընթացը նվիրված է պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման ինստիտուտի առանձնահատկությունների ներկայացմանն ու քննարկմանը: Դասընթացի ընթացքում քննարկվում են, մասնավորապես, հետևյալ հարցերը.

- Պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանությանն ուղղված օրենսդրական կարգավորումները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանությունների կիրառելիությունը,
- Վնաս պատճառողների և տուժողների իրավական կարգավիճակը,
- Վիրավորանքի, զրպարտության և գնահատող դատողությունների որակումը,
- Պաշտոնատար անձանց քննադատության սահմանները,
- Պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և վնասի հատուցումից ազատվելու պայմանները,

- Հայցային վաղեմության ժամկետները:

*Դասընթացը վարում է ՀՀ վճարելի դատարանի նախագահի
խորհրդական Լիպարիտ Դրմեյանը:*